



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

18.07.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ՍՑ-ԷՍ-2017/01**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2017թ. թիվ 03/73-3/7635-17 գրությամբ «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.04.2017թ. թիվ 20/292 գրության հիման վրա, 03.05.2017թ. թիվ 03/73-3/7635-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.04.2017թ. թիվ 20/292 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-17/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղերն զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն, 19.04.2017թ. կատարվել է հարցում: Նշված հարցման մասին եզրակացության արդյունքում պարզվել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, այն է՝ 12.04.2017թ., «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ն ունի 576 710 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Պատվիրատուն 26.04.2017թ. թիվ 20/292 գրությանը կից ներկայացրել է նաև նշված ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մեթր-սթիլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 17.05.2017թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-17/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով Ընկերությունը ներկայացրել է գնային առաջարկ:

Պատվիրատուի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ կատարած հարցման արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, ինչի հետևանքով Ընկերության հայտը մերժվել է և պայմանագիր չի կնքվել:

Ընկերությունը գտնում է, որ առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը հետևյալ պատճառաբանությամբ.

«Հաշվի առնելով, որ ՀՀ ԱԱԾ նամակն ուղարկվել է 26.04.2017թ., ապա «Գնումների մասին» գործող Օրենքի (ուժի մեջ է մտել 25.04.2017թ.) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը Ընկերության հանդեպ ընթացակարգ նախաձեռնելու հիմք չի կարող հանդիսանալ»:

Խորհրդում 22.05.2017թ. կայացած ՍՑ-ԷՍ-2017/01 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի նիստին Ընկերությունը Խորհրդին ներկայացրեց 12.05.2017թ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության կողմից տրված տեղեկանքն առ այն, որ 11.05.2017թ դրությամբ Ընկերությունը ունեցել է միայն դեբետային մնացորդներ որոշ հարկատեսակների մասով:

Ընկերությունը Խորհրդին հայտնեց, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն՝ Ընկերության 12.04.2017թ. դրությամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների առաջացման հիմք է հանդիսացել 10.12.2017թ. ԵԱՏՄ ներկրման գործարքի էլեկտրոնային հաշվետվության ճշգրտման ժամանակ թույլ տրված սխալը, որի վերաբերյալ Ընկերությունը գանգատարկել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով:

Միաժամանակ հաշվի առնելով, որ հարկային պարտավորության առաջադրման հիմքը Ընկերության կողմից վիճարկվում է, Ընկերությունը Խորհրդին միջնորդություն ներկայացրեց՝ խնդրելով ՍՑ-ԷՍ-2017/01 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ որոշման ընդունումը հետաձգել մինչև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ կողմից հաշվարկված պարտավորությունների դեմ Ընկերության գանգատի վերաբերյալ որոշման կայացումը:

Խորհրդի կողմից բավարարվեց Ընկերության միջնորդությունը:

Ընկերությունը 10.07.2017թ. Խորհրդին ներկայացրեց Ընկերության կողմից 24.04.2017թ. ներկայացրած դիմում-գանգատի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 13.06.2017թ. թիվ 33/4 որոշումը, որի համաձայն Հանձնաժողովը մերժել է Ընկերության կողմից ներկայացված գանգատը:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Գևորգ Խաչատրյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/01 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, հտորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2017թ. թիվ 03/73-3/7635-17 գրությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 26.04.2017թ. թիվ 20/292 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-17/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 19.04.2017թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) կատարված հարցումը և Կոմիտեի կողմից 21.04.2017թ. տրված եզրակացությունը, Ընկերության 17.05.2017թ. գրությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ կողմից 12.05.2017թ. N1581 տրված տեղեկանքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին Ընկերության կողմից 24.04.2017թ. ներկայացրած դիմում-գանգատը և դրա վերաբերյալ 13.06.2017թ. կայացված թիվ 33/4 որոշումը:

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարվել է «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-17/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

«Մեթր-սթիլ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Հանձնաժողովի 19.04.2017թ. ժամը 14:15-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1-ին կետով որոշեց ընթացակարգի առաջին, երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցներին՝ ըստ չափաբաժինների՝ համաձայն նույն արձանագրության թիվ 4 Հավելվածի:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել հարցում՝ ընթացակարգի առաջին և հաջորդ տեղն զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել «Մերթ-սթիլ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, այն է՝ 12.04.2017թ., ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ եզրակացություն:

Կոմիտեի կողմից 21.04.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մերթ-սթիլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 576 710 (հինգ հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր տասը) ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 25.04.2017թ. թիվ 4 արձանագրությամբ մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների,

ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,

• 48-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Խորհրդում կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ Ընկերությունն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, սակայն Խորհրդին խնդրեց հաշվի առնել այն հանգամանքը, որ Ընկերությունը բարեխիղճ կերպով երկար տարիներ գործել է օրենքի շրջանակներում, երբևիցե որևէ բացթողում, ուշացում, պարտականությունների թերացում, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություններ չի ունեցել և արձանագրված խախտումն առաջինն է:

Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության կողմից տրված տեղեկանքն առ այն, որ 11.05.2017թ դրությամբ Ընկերությունը ունեցել է միայն դեբետային մնացորդներ (գերավճարներ) որոշ հարկատեսակների մասով (ընդամենը՝ 98194 (իննսունուհազար հարյուր իննսունչորս) ՀՀ դրամի չափով):

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ն 12.04.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

• 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

• 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով այն մասին, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված բողոքով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2017թ. թիվ 03/73-3/7635-17 գրությամբ «Մերթ-սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ